

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՐՄՈՒԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<29>> հունիսի 2015թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի հունվարի 21-ի N 2 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սամվել Շահբազյանի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Յոդիկ Բաբայանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Լյուսյա Պողոսյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուրավերդյանի, քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խաչիկ Ասլանյանի, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Սամվել Աղաջանյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Աղասի Հովհաննիսյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Ավագ Գաբրիելյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մարատ Ներսիսյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գոհար Խաչատրյանի, ֆինանսական վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանի, զարգացման ծրագրերի վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանի, իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի և ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Սահակ Ոսկանյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկի քաղաքային համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ուստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, հողօգտագործման, ընդերքօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, առևտրի և ծառայությունների, մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի, կրթության, քաղաքաշինության, տրանսպորտի և կապի, առողջապահության, արտակարգ իրավիճակների, ԲԿԱԳ-ը, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:


3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավարին:


Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)


/ստորագրություն/


Ռազմիկ Հայրապետյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Մարատ Ներսիսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Ցողիկ Բաբայան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Լյուսյա Պողոսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Նարինե Մաղաքյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սմբատ Խլիխայան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Գոհար Խաչատրյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սամվել Շահբազյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Աղասի Հովհաննիսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Արամ Կոստանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Խաչիկ Ասլանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սամվել Աղաջանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Ավագ Գաբրիելյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Սահակ Ոսկանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Վարդան Հովհաննիսյան (Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավար)


/ստորագրություն/

2015 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք

Ջերմուկի քաղաքային համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|-------------|--|---|--|--|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| <p>1. Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան</p> | | | <p>V պլանը չի մշակվել, քանի որ չի պահանջվել</p> | <p>Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը չի մշակվել, չեն կատարվել ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշման 3-րդ կետը</p> | <p>առաջարկվում է մշակել միջոցառումների պլանը համագործակցելով ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ</p> | <p>մինչև 31.12.2015թ</p> |
| <p>2. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան</p> | | | <p>V պլանը չի մշակվել,</p> | <p>Պլանը չի մշակվել, Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները</p> | <p>առաջարկվում է մշակել պլանը սահմանված կարգով</p> | <p>մինչև 31.12.2015թ</p> |
| <p>3. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p> | | <p>V /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ սեյսմիկ ռիսկի</p> | | <p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համաձայն որի համայնքը պետք է ունենա սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ</p> | <p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով</p> | <p>Ֆինանսական հնարավորությունների առկայության ժամանակ</p> |

| | | | | | | |
|--|--|--------------------------|--|--|--|--|
| | | գնահատման քարտեզ առկա չէ | | | | |
|--|--|--------------------------|--|--|--|--|

Հավելված 2. Առողջապահության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Ընդհի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|--|-------------|-------------------|---|--|--|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| <p>1. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի և աղբահավաք խցերի դեզինսեկցիայի ու դեռատիզացիայի աշխատանքներն իրականացված են (առնվազն երեք ամիսը մեկ անգամ):</p> | | | <p>V Համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում դեզինսեկցիայի ու դեռատիզացիայի աշխատանքներ (առնվազն երեք ամիսը մեկ անգամ) չեն իրականացվում:</p> | <p>Չի պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 26.2րդ կետը, համաձայն որի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, դեզինսեկցիայի (պայքար միջատների դեմ) և դեռատիզացիայի (պայքար կրծողների դեմ) աշխատանքները իրականացվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ</p> | <p>Առաջարկվել է ապահովել դրույթի կատարման պահանջները</p> | <p>Մինչև 01.09.2015թ</p> |